Սիմոնիտի, Մալխօ, Բօլօկօ, Տխիրնալ, Մուլվանետի եւ Ջանալ գեղերը:

Այս գաւառին կից գտնւում է Գոնիա գաւառակը իր ծովափնեայ նաւահանգիստներով եւ գեղերով, որոնցից նշանաւոր են, Գոնիա, Գոնիա (աւերակներ) բերդ, Ադլիէ, Գոնիա գեղ, Կանլի-դերէ, Սարփ գեղ, Սարփ մացրա, Ցոպա, Ուչ-Կարդաշ, Մակրիալ, Ջանդախոռ, Խալբաշ (հին տաճարով), Մակրիալ նաւահանգիստ, Բակեան, Քեօփրիջայ, Կուլի մացրա, Համչէն մացրա, Սովել մացրա, Լիման, Մանելօղլի եւ Սուլթան Սելիմ:

Պալխար վտակի Աւապանի նկարագրութեան ծանօթութեան մէջ յիշեցինք Բախլ-Բալխի, Բահլի-բարի, Պահլար կամ Պալխարի եւ Բաղտրիայի Բահլ քաղաքների անունների մասին: Այստեղ եւս պարտաւորուած ենք սոյն Փէհլէվան-Պահլավան աւերակների մասին կանգ առնելու. այն աւերակ բերդի մասին, որ կանգնած է Ճորոխի եւ Սեւ Ծովի մէջ, որից մինչեւ գետափը կամ ծովափը հազիւ 7—8 կիլոմետր հեռաւորութիւն ունենայ: Այս բերդերն եւս խուզարկուի միտքը գրաւում, յիշեցնում են այն մեծութիւնը որ ունեցել են Պահլաւները Օլթի, Իդ, Սիվրիլի, Փանագկերտ, Բահլ-Պալխար վտակների ափերից մինչեւ Սեւ Ծովի ափերը աւելի քան 120 կիլոմետր տարածութեան վրայ, որ տեղերում շինուած